

Արձանագրություն N3

2018 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 10:00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. «Հայաստանի ձեռներեցների կոնֆեդերացիա» իրավաբանական անձանց միության ներկայացուցիչ Տ. Հովհաննիսյանը նախօրոք հայտնել էր, որ հարգելի պատճառով չի կարող մասնակցել նիստին և խնդրել էր նիստի օրակարգում ներառված՝ ավտոմեքենաների առուվաճառքով զբաղվող քաղաքացիների գործունեության ոլորտում օրենսդրական փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկությունները քննարկել հաջորդ նիստի ընթացքում: Որոշվեց «Հայաստանի ձեռներեցների կոնֆեդերացիա» իրավաբանական անձանց միության առաջարկները տեղափոխել առաջիկա նիստի օրակարգ:

2. Խորհրդի նախագահ Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց պարզաբանումների տրամադրման նոր համակարգի ներդրման աշխատանքները սկսելու հնարավոր ժամկետների վերաբերյալ հարցը: Մասնավորապես, վերջինս նշեց, որ իր կարծիքով հարկ վճարողների կողմից բարձրացված խնդրահարույց հարցերի շուրջ ՀՀ ՊԵԿ կողմից տրված պարզաբանումները պետք է համախմբել ըստ հարցերի բովանդակության և ապահովել դրանց հասանելիությունը բոլոր հարկ վճարողների համար: Նշված հարցի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը հայտնեց, որ պաշտոնական պարզաբանումների տրամադրման իրավասությունը մինչև ս.թ. հուլիսի 1-ը պատկանում էր ՀՀ ՊԵԿ-ին, իսկ ս.թ. հուլիսի 1-ից այդ լիազորություններն անցել են Կառավարության կողմից լիազորված՝ ֆինանսական բնագավառում պետական կարգավորում իրականացնող պետական մարմնին, այն է՝ Ֆինանսների նախարարությանը, որն էլ ՀՀ հարկային օրենսգրքի 306-րդ հոդվածի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում իր սահմանած կարգով տրամադրում է պաշտոնական պարզաբանումներ, իսկ 307-րդ հոդվածին համապատասխան՝ որոշում հարկային մարմնի կողմից իրականացվող իրազեկումների շրջանակները: Վերջինս նաև նշեց, որ օրենսգրքի 307-րդ հոդվածի 8-րդ մասով արդեն իսկ նախատեսված է հարկային մարմնի կողմից հարկ վճարողների իրազեկման աշխատանքների շրջանակներում առավել հաճախ հանդիպող հարցերի

ու դրանց վերաբերյալ տրված պատասխանների՝ առանց հարկ վճարողներին վերաբերող տվյալների, հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրման, իսկ հետագայում նույն հարցերով տրվող դիմումներ ստանալու դեպքում՝ պաշտոնական ինտերնետային կայքում տրված համապատասխան իրազեկումներին հղում կատարելու դրույթները: Ինչ վերաբերում է հաճախ հանդիպող հարցերի վերաբերյալ իրազեկումների հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրման ժամկետներին, ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը հայտնեց, որ այն նպատակահարմար է իրականացնել հունվարի 1-ից՝ պայմանավորված ՀՀ հարկային օրենսգրքում առաջիկայում կատարվելիք փոփոխություններով, որի արդյունքում կկարգավորվեն ներկայումս խնդրահարույց հանդիսացող մի շարք հարցեր: Միաժամանակ, նշվեց նաև, որ հաճախ հանդիպող հարցերի վերաբերյալ իրազեկումները պետք է ունենան համար, ամսաթիվ, ինչպես նաև փնտրման հնարավորություն: Քննարկումների արդյունքում որոշվեց իրազեկումների հրապարակումը կատարել հունվարի 1-ից, իսկ վերջինիս հետ կապված բոլոր աշխատանքները կանոնակարգելու նպատակով առաջիկա 1 ամսվա ընթացքում կազմակերպել աշխատանքային քննարկումներ: ՀՀ ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահի տեղակալ Տ. Շահբազյանը հայտնեց իր պատրաստակամությունը աջակցել համապատասխան աշխատանքների իրականացմանը՝ օգտագործելով տվյալ ոլորտում իրենց կողմից ձեռք բերված փորձը: Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչ Ա. Հարությունյանը նշեց նաև, թե արդյոք ՀՀ ՊԵԿ բողոքարկման հանձնաժողովի կողմից կայացված որոշումները չեն կարող կիրառվել նմանատիպ դեպքերի վրա՝ հարկ վճարողների կողմից լրացուցիչ անգամ բողոքարկման հանձնաժողով չդիմելու նպատակով: Վերջինիս կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ բողոքարկման հանձնաժողովի կողմից կայացված որոշումները չեն կարող նախադեպ հանդիսանալ և կիրառվել համանման դեպքերի նկատմամբ, քանի որ յուրաքանչյուր գործ ունի իր փաստական հանգամանքները, որոնց քննության արդյունքում էլ կայացվում է համապատասխան որոշում: Միաժամանակ, ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Բադասյանը նշեց, որ փաստական հանգամանքների նույնական լինելու դեպքում պետք է կիրառվի նույն

մոտեցումը, իսկ փաստական հանգամանքների նույնականությունը հարկային կամ մաքսային տեսուչի կողմից չտարբերակելու դեպքում, գործը պետք է քննել բողոքարկման նիստի շրջանակներում: Առաջարկվեց նաև բողոքարկման հանձնաժողովի կողմից կայացված որոշումներին համապատասխան կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, ինչի կապակցությամբ խորհրդի նախագահ Փ. Թադևոսյանը հայտնեց, որ նման փոփոխություններ հաճախակի կատարվում են:

3. Աուդիտորների պալատի ներկայացուցիչ Ն. Սարգսյանի կողմից ներկայացվեցին հաշվարկային փաստաթղթերին առնչվող մի շարք հարցեր: Առաջին հարցը վերաբերում էր հետևյալին: Նշվեց, որ օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված են օրենսգրքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների ճշգրտման դեպքերը, որին համապատասխան, մասնավորապես, գործարքը ճշգրտվում է, երբ գործարքի առարկան պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանք է: Ն. Սարգսյանը նշեց, որ գործող կարգավորման շրջանակներում արհեստական սահմանափակումներ են ստեղծվում գործարարների ազատ տնտեսական որոշումների կայացման համար: Հարկային օրենսդրությունը պետք է նպաստի գործարար միջավայրի բարելավմանը և ոչ թե արհեստական խոչնդոտներ ստեղծի՝ սահմանափակելով գործարարների ազատ որոշումներ կայացնելու և ազատ պայմանագրեր կնքելու իրավունքը: Վերջինս նաև նշեց, որ այն դեպքերում, երբ գործարարը մարքեթինգային հնարք է կիրառում՝ պարտավորվելով մատակարարված ապրանքները 3, 4, 5 կամ 6 ամիսների ընթացքում չվաճառվելու դեպքում հետ վերադարձնել, ապա տվյալ դեպքում գործարքների ճշգրտման առումով ինչ նշանակություն ունի թե վերադարձվող ապրանքը պահպանման ժամկետ ունի, թե ոչ: Միաժամանակ, նաև նշեց, որ եթե ապրանքը վաճառվում է ԱԱՀ վճարող չհամարվող հարկ վճարողի, ապա տնտեսավարողը ոչ միայն զրկվում է ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքից, այլև այդ ապրանքը վաճառելիս կրկին վճարում է ԱԱՀ: Ն. Սարգսյանը հայտնեց, որ չի հասկանում այն տրամաբանությունը, թե ինչու պահպանման ժամկետ ունեցող ապրանքների մատակարարման գործարքները՝ այդ ապրանքների հետ վերադարձման դեպքերում կարող են ճշգրտվել, իսկ

պահպանման ժամկետ չունեցող ապրանքների դեպքում՝ ոչ: Նշեց նաև, որ տնտեսավարողները մի շարք դեպքերում գործարքների ճշգրտման նպատակով դիմում են տարբեր հնարքների, օրինակ՝ մատակարար կազմակերպությունների հետ կնքում են պայմանագրեր՝ նշելով, որ մատակարարվող ապրանքներն ունեն օրինակ 3 տարվա պահպանման ժամկետ՝ չհասկանալով, որ իրենք չունեն նման իրավասություն, ինչն էլ հանգեցնում է հարկային մարմնի կողմից տնտեսավարողների նկատմամբ պատասխանատվության կիրառման: Նշվածի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը հայտնեց, որ հիմնականում ապրանքների վերադարձ կատարվում է պահպանման ժամկետ ունեցող ապրանքները պահպանման ժամկետներում չիրացվելու դեպքերում, և հենց այդ դեպքերի համար էլ նախատեսվել է վերոնշյալ դրույթը: Միաժամանակ հայտնեց, որ ինքն անձամբ դեմ չէ պահպանման ժամկետ չունեցող ապրանքների մատակարարման գործարքների ճշգրտման սահմանափակման վերացմանը՝ առաջարկելով վերոնշյալ դրույթի փոփոխության վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել հարկային քաղաքականություն մշակող լիազոր մարմին՝ Ֆինանսների նախարարություն:

Ն. Սարգսյանի կողմից ներկայացվող հաջորդ առաջարկը վերաբերում էր ՀԴՄ կտրոնների որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ ընդունելուն: Ներկայացվեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ ՀԴՄ կտրոնը կիրառվում է ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, իսկ օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները) պարունակելու դեպքում՝ նաև ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար: Նշվեց, որ գործող կարգավորման շրջանակներում արհեստական սահմանափակումներ են ստեղծվում գործարարների ազատ տնտեսական որոշումների կայացման համար՝ տնտեսավարող սուբյեկտներին անուղղակիորեն ուղղորդելով խոշոր հարկ վճարողների մոտ: Օրինակ, եթե տվյալ ապրանքը սպեցիֆիկ է կամ եթե այդ ապրանքը կարելի է ավելի էժան գնով գնել ՓՄՁ սուբյեկտներից, ապա տվյալ պարագայում սահմանափակվում է տվյալ տնտեսավարողի՝ ՓՄՁ սուբյեկտից ձեռք բերված

ապրանքների գծով ծախսերը նվազեցնելու իրավունքը, քանի որ տվյալ ձեռքբերումները ծախսագրելու համար ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրված լինի գնորդի ՀՎՀՀ-ն, ինչը ներկա պահին՝ ՓՄՁ սուբյեկտների ունեցած ՀԴՄ-ներով հնարավոր չէ ապահովել: Նշվեց նաև, որ ապրանք մատակարարողը չի տրամադրելու ձեռքբերողի ՀՎՀՀ-ն պարունակող ՀԴՄ կտրոն՝ մտավախություն ունենալով, որ իր նկատմամբ կկիրառվեն դրամարկղային գործառնությունների սահմանափակումները չպահպանելու համար սահմանված պատասխանատվության միջոցները: Միաժամանակ, նշեց, որ շատ տնտեսավարող սուբյեկտներ մինչ օրս անտեղյակ են ՀԴՄ-ները համապատասխան ծրագրավորմամբ ապահովելու դեպքում՝ ՀԴՄ կտրոնների վրա գնորդ հարկ վճարողի ՀՎՀՀ-ն մուտքագրելու հնարավորության վերաբերյալ, ինչի կապակցությամբ Փ. Թադևոսյանը հայտնեց, որ այդ մասին հարկ վճարողներն իրազեկվել են ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքէջում տեղադրված համապատասխան տեղեկատվության միջոցով: Ն. Սարգսյանն առաջարկեց ՀԴՄ կտրոնների՝ որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ ընդունելու համար դրանց վրա գնորդի ՀՎՀՀ-ն տպագրելու պահանջի փոխարեն (այդպիսով զսպելով նաև տնտեսավարողների կողմից այլ անձանց ՀԴՄ կտրոնները որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ օգտագործելու ռիսկերը) սահմանել, որ կազմակերպությունը իր ՀԴՄ կտրոնի վրա դնի իր կնիքը, ինչի արդյունքում կբացառվի նաև այդ ՀԴՄ կտրոնի այլ անձանց կողմից օգտագործումը: Նշվածի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ դեմ է նախկինում գործող կնիքներ դնելու, ստորագրելու կարգավորումներին վերադառնալու առաջարկին և առաջարկեց հարցը կարգավորել կանխիկի սահմանափակումների վերանայման միջոցով: Միաժամանակ, վերջինս նաև նշեց որ կանխիկի սահմանափակումները տնտեսավարողների համար «ծուղակ» չեն, այլ օրենքով ամրագրված պահանջ, որի մասին տնտեսավարողը պարտավոր է հիշել, այնուամենայնիվ նշված խնդրից խուսափելու նպատակով որոշվեց քննարկել նշված սահմանափակումների վերանայման հարցը: Փ. Թադևոսյանը համակարծիք էր Ա. Մանուկյանի՝ վերոնշյալ խնդիրը կանխիկի սահմանափակումների վերանայման միջոցով լուծելու առաջարկության հետ: Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչ Ա. Հարությունյանն առաջարկեց իրավաբանական անձանց ձեռքբե-

րումների մասով հանել կանխիկի սահմանափակումները, միաժամանակ ՀԴՄ կտրոնի վրա գնորդի ՀՎՀՀ-ն տպագրված լինելու դեպքում այն հիմք ընդունել ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարելիս: Վերջինիս վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ դեմ է կանխիկի սահմանափակումների վերացմանը՝ նշելով, որ նշված դրույթներն ի սկզբանե նախատեսվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից մանրածախ առևտրականներից կատարվող փոքր ձեռքբերումների գծով ծախսերը փաստաթղթավորելու նպատակով՝ իրավաբանական անձանց ձեռքբերումները հաշվարկային փաստաթղթերով հիմնավորման դրույթներից ՀԴՄ կտրոններով հիմնավորման կարգավորումներին անցումը համարելով անընդունելի: Նշվածի վերաբերյալ Ա. Հարությունյանը հայտնեց, որ իր առաջարկը վերաբերում է նշված սահմանափակումների՝ վաճառող տնտեսավարող սուբյեկտների մասով չկիրառելուն: Ծավալված քննարկումների արդյունքում որոշվեց սույն հարցը քննարկել աշխատանքային կարգով:

Ն. Սարգսյանի կողմից ներկայացվեց ապրանքների տեղափոխության փաստաթղթավորման հետ կապված առաջարկությունը: ՀՀ Հարկային օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքում մատակարարվող կամ տեղափոխվող՝ շարժական, նյութական գույք հանդիսացող ապրանքների (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հանրային ծառայությունների ենթակառուցվածքները շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով տեղափոխվող ապրանքների, Կառավարության սահմանած ցանկում ներառված ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից տեղափոխվող հիմնական միջոցների, ինչպես նաև խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքների և արտարժույթի) մատակարարումը կամ տեղափոխությունը պարտադիր կարգով իրականացվում է ուղեկցող փաստաթղթերով: Ն. Սարգսյանը նշեց, որ եթե ապրանքների տեղափոխության փաստաթղթավորման պարտադիր պահանջի նպատակը տնտեսավարող սուբյեկտների կողմից իրացման շրջանառությունների թաքցնելը, թերհայտարարագրելը կանխարգելելն է, ապա ինչու պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող հիմնական միջոցների, հումքի, կիսաֆաբրիկատների տեղափոխման համար նույնպես սահմանված է պարտադիր փաստաթղթավորման պահանջ: Փ. Թադևոսյանը

հայտնեց, որ նախկինում գործող կարգավորումներով հիմնական միջոցների տեղափոխությունը փաստաթղթավորելու պարտադիր պահանջ սահմանված չէր, և որ փաստաթղթավորման պահանջը նպատակ ուներ վերահսկելու տնտեսավարող սուբյեկտների ապրանքնային շարժը: Նշեց նաև, որ հումքի տեղափոխության մասով փաստաթղթավորման պահանջի վերացման հարցը համարում է վիճելի, իսկ հիմնական միջոցների տեղափոխության փաստաթղթավորման պահանջի վերացման առաջարկության հետ համակարծիք է, քանի որ նշված դեպքում հիմնական միջոցների շարժը կարելի է վերահսկել տնտեսավարող սուբյեկտի մոտ տվյալ ապրանքը որպես հիմնական միջոց հաշվառված լինելու փաստը ստուգելով: ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ որոշ դեպքերում տեղափոխվող հումքը, հիմնական միջոցը իսկապես հանդիսանում են հումք (օրինակ՝ ալյուրը), հիմնական միջոց, սակայն մի շարք դեպքերում էլ դրանք հանդիսանում են ապրանք և այս դեպքում կատարվում է ապրանքի մատակարարում և ոչ թե տեղափոխություն՝ տարբեր պրակտիկ օրինակներով ընդգծելով ապրանքը հումքից, հիմնական միջոցներից տարբերակելու անհնարինությունը: Միաժամանակ նշեց, որ վերոնշյալ պահանջի վերացման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա հսկողական գործողություններ իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում: Վերջինիս վերաբերյալ Ն. Սարգսյանը հայտնեց, որ հարկային մարմինն հասանելի է տնտեսավարող սուբյեկտների սկզբնական մնացորդների, ձեռքբերումների, ներմուծումների, վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը, և որ հարկային մարմի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ուսումնասիրություններ իրականացնելու արդյունքում հնարավոր է ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն: «Տոնավաճառներ» ՀԿ ներկայացուցիչ Գ. Դանիելյանը նշեց, որ ապրանքների տեղափոխության փաստաթղթավորման պահանջը մեծ դժվարություններ է առաջացնում տոնավաճառ տեղափոխվող ապրանքների մասով՝ հաշվի առնելով տեղափոխվող ապրանքների անվանացանկի լայն շրջանակը:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Մ. Կոստանդյանը ներկայացրեց ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջը խախ-

տելու համար սահմանված պատասխանատվության չափի վերանայման վերաբերյալ իրենց առաջարկությունը: Ապրանքները առանց ուղեկցող փաստաթղթերի տեղափոխելու կամ մատակարարելու համար ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է պատասխանատվություն՝ 1-ին անգամ կատարելու համար ապրանքի գնի 50 տոկոսի չափով տուգանք, բայց ոչ պակաս 200000 դրամից, իսկ մեկ տարվա ընթացում 2-րդ անգամ կրկնվելու դեպքում՝ ապրանքի գնի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 500000 դրամից, և երրորդ և ավելի անգամ փաստն արձանագրվելու դեպքում՝ ապրանքի գնի 200 տոկոսի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից: Առաջարկվեց օրենսգրքից հանել ոչ պակաս գումարները, ինչպես նաև երրորդ և ավելի անգամի դեպքում կիրառել տուգանք՝ ապրանքի գնի 100 տոկոսի չափով: Վերջինիս վերաբերյալ Համլետ Սահակյանը բերեց օրինակ, որ խնդիր է առաջանում նաև այն դեպքում, երբ կիրակի օրերին պահեստից խանութ ապրանք տեղափոխելու համար հնարավոր չի լինում դուրս գրել տեղափոխման փաստաթուղթ՝ պայմանավորված հաշվապահի բացակայությամբ, և որ նշված դեպքերում ՕՀՄ-ի շրջանակներում տուգանքի կիրառումը անընդունելի է: Քննարկումների արդյունքում որոշվեց վերոնշյալ դեպքերի համար կիրառվող պատասխանատվության վերանայման հարցը քննարկել աշխատանքային կարգով:

Ն. Սարգսյանի կողմից ներկայացվեց ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտման դեպքում գործարքի ճշգրտման արդյունքների արտացոլման պահանջի վերանայման վերաբերյալ առաջարկությունը: ՀՀ հարկային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ գործարքի ճշգրտման դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողները (բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հարկ վճարողների) պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքները՝

1) ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով արտացոլել համապատասխան ճշգրտող հաշվարկային փաստաթղթի դուրսգրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում նվազում են գործարքից

առաջացած հարկային պարտավորության և հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարները,

2) ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով արտացոլել հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում ավելանում են գործարքից առաջացած հարկային պարտավորության և հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարները,

3) այլ հարկերի և բնօգտագործման վճարի մասով արտացոլել հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում:

Նշվեց, որ հնարավոր է դեպք, երբ շահութահարկի հաշվետու ժամանակաշրջանը հարկային մարմնի կողմից արդեն ստուգված է և այդ ժամանակաշրջանում կատարված գործարքի ճշգրտման արդյունքները հնարավոր չէ արտացոլել հիմնական գործարքի կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող հարկային հաշվարկներում: Նշված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին ծանուցվում է, որ շահութահարկի և ԱԱՀ-ի շրջանառությունների միջև առկա է անհամապատասխանություն: Առաջարկվեց վերանայել մոտեցումը և գործարքների ճշգրտման արդյունքներն արտացոլել համապատասխան ճշգրտող հաշվարկային փաստաթղթի դուրսգրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում: Նշվածի վերաբերյալ Փ. Թադևոսյանը նշեց, որ համաձայն չէ նշված առաջարկությանը, քանի որ վերջինիս արդյունքում չեն գանձվի նաև գործող կարգավորումներին համապատասխան հաշվարկվող տույժերը՝ տնտեսավարողներին մոտիվացնելով անընդհատ ճշգրտել գործարքները: Միաժամանակ, ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ ստուգված հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործարքների ճշգրտման արդյունքում հարկային պարտավորությունների ճշտման մասով բարձրացված հարցը կարգավորված է ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասով:

Եվրոպական բիզնես միության ներկայացուցիչը ներկայացրեց դեպք, երբ կազմակերպությունը վաճառում է ԱԱՀ-ով հարկման ենթակա ապրանքներ և

հարկման ոչ ենթակա բժշկական սարքավորումներ: Նշեց, որ կազմակերպությունը դեղատանը հաշիվ վավերագրով վաճառում է բժշկական սարքավորում, և այլ ապրանքների օտարման մասով դուրս է գրում հարկային հաշիվ: Հետագայում՝ բժշկական սարքավորումը հետ վերադարձվելու դեպքում համակարգը թույլ չի տալիս գործարքի ճշգրտման արդյունքները ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում արտացոլել: Միաժամանակ, Ա. Մանուկյանը բերեց օրինակ, որ այն դեպքերում, երբ գործունեություն չիրականացնող հարկ վճարողներին հետ է վերադարձվում նախկինում մատակարարված ապրանք, ապա այդ գործարքի ճշգրտման արդյունքները գործարքի ճշգրտման հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմին ներկայացվող հաշվարկում արտացոլելու կարգավորումների պարագայում առաջանում է բացասական շրջանառություն: Ն. Սարգսյանի կողմից առաջարկվեց գործարքների ճշգրտման արդյունքներն արտացոլել հիմնական գործարքի կատարման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում: Նշվածի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետի տեղակալ Ա. Վարդանյանը նշեց, որ այն դեպքերում, երբ ապրանքի մատակարարման գործարքի ճշգրտման արդյունքում նվազում են գործարքից առաջացած հարկային պարտավորության գումարները, գործարքների ճշգրտման արդյունքները հիմնական գործարքի կատարման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում արտացոլելու դեպքում ձեռքբերող հարկ վճարողի կողմից հաշվանցման ենթակա գումարների պակասեցման արդյունքում կհաշվարկվեն տույժեր, ինչն էլ հետագա բողոքների առիթ կհանդիսանա՝ առաջարկելով բարձրացված հարցը կարգավորել հարկ վճարողներին չծանուցելու միջոցով: Վերջինիս մասով Ն. Սարգսյանն առաջարկեց, որ այն դեպքերում, երբ գործարքների ճշգրտման արդյունքում պակասում են ապրանք ձեռքբերող սուբյեկտների հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները, ապա այդ գործարքների ճշգրտման արդյունքները հնարավորություն տալ ձեռքբերող տնտեսավարողներին արտացոլել գործարքի ճշգրտման հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում: Նշված մոտեցմանը դեմ արտահայտվեց ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը: Բարձրացված հարցի առավել մանրամասն ուսումնասիրության,

ներկայացված առաջարկները քննարկելու և լավագույն լուծում գտնելու նպատակով որոշվեց սույն հարցը քննարկել աշխատանքային կարգով:

Ն. Սարգսյանի կողմից ներկայացվեց ապրանք հասկացության վերանայման վերաբերյալ առաջարկը: ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն ապրանք է համարվում դրամական միջոցից, ֆինանսական ակտիվներից, ոչ նյութական ակտիվներից, գույքիլից տարբերվող ցանկացած ակտիվ, եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ: Արտարժույթի փոխանակման կամ դիվերային վաճառքի գործունեության մեջ արտարժույթը ևս համարվում է ապրանք: Նշվեց, որ գործող կարգավորման շրջանակներում ապրանքի սահմանումը թյուրիմացության մեջ է գցում հարկ վճարողներին՝ հակասելով օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված «պարզություն և հստակություն» սկզբունքին: Առաջարկվեց հիմնական միջոցները, հումք և նյութերը, արտադրանքը առանձնացնել ապրանքից, ապրանքի սահմանումը տալ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան: Միաժամանակ վերջինիս կողմից նաև նշվեց, որ եթե օրենսգրքի կիրառության իմաստով ապրանք են համարվում հիմնական միջոցները, հումքը, նյութերը, արտադրանքը և այլն, ապա ինչու ապրանքային պակասորդի համար սահմանված պատասխանատվությունը հումքի, նյութերի և այլ ատիվների մասով չի կիրառվում: Վերջինիս մասով Փ. Թադևոսյանը հայտնեց, որ այդ պատասխանատվությունը նախկինում կիրառվել է նաև հումքի, նյութերի և այլ ակտիվների մասով: Նշված հարցի կարգավորման նպատակով Փ. Թադևոսյանը Ն. Սարգսյանին առաջարկեց ներկայացնել ապրանքի սահմանման իր տարբերակը, միաժամանակ առաջակելով, որ նման սահմանում ներկայացվի նաև ՊԵԿ-ի կողմից:

Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչ Ա. Հարությունյանի կողմից առաջարկվեց հստակեցնել, թե որ դեպքերում է ՀԴՄ-ի կիրառությունը պարտադիր: Մասնավորապես՝ հարցը վերաբերում էր ապրանքները պահեստից վաճառելու դեպքերին, թե արդյոք նշված դեպքում հաշիվ վավերագիր կամ հարկային հաշիվ դուրս գրելու հետ մեկտեղ պետք է տպագրվի նաև ՀԴՄ: Վերջինիս վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական

հաշվարկների դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության պարտադիր չլինելու դեպքերը: Միաժամանակ, հայտնեց, որ պահեստից վաճառքների դեպքում ՀԴՄ կիրառությունը պարտադիր չէ:

4. Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչ Ա. Հարությունյանի կողմից ներկայացվեց արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների մասով արտարժույթի փոխարժեքի որոշման հետ կապված հարցը: Մանավորապես, նշվեց, որ գործող կարգավորումներին համապատասխան՝ արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են մաքսային և հարկային հայտարարագրեր ներկայացնելու օրվա փոխարժեքների հիման վրա՝ անտեսելով գործարքի փաստացի կատարման հանգամանքը: Նշվեց, որ այն դեպքերում, երբ տվյալ գործարքի մասով հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվում մի ամսաթվով, իսկ ներմուծումը կամ արտահանումը տեղի է ունենում այլ ամսաթվի, արդյունքում առաջանում է անհամապատասխանություն, քանի որ արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են հայտարարագրերի ներկայացման օրվա փոխարժեքներով: Նշված հարցի մասով Փ. Թադևոսյանը Ա. Մանուկյանին հարցրեց, թե ինչ նպատակով են սահմանվել այս կարգավորումները, ինչն է եղել այս կարգավորումներին անցման շարժառիթը: Ա. Մանուկյանը պատասխանեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 16-րդ հոդվածի նախնական շարադրանքը նպատակաուղղված է եղել ԱԱՀ-ով և շահութահարկով հարկման առումներով կիրառվող մոտեցումների նույնականացմանը: Նշեց նաև, որ ցավոք այն չի ստացվել, քանի որ կան մի շարք առանձնահատկություններ, և որ հենց այդ պատճառով էլ օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց 4-րդ մասով: Փ. Թադևոսյանն առաջարկեց արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշել

ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի անցման օրվա փոխարժեքով: Ա. Հարությունյանը նշեց, որ հաշիվ վավերագրում, հարկային հաշվում նախատեսված է փաստաթղթի ներկայացման ամսաթվի և գործարքի կատարման ամսաթվի դաշտ, և առաջարկեց հայտարարագրերի ներկայացման ամսաթվից անկախ՝ ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշել գործարքի կատարման օրվա փոխարժեքով: Փ. Թադևոսյանը հայտնեց, որ սույն հարցերը կքննարկվեն աշխատանքային կարգով, որից հետո կկազմվի աղյուսակ, որտեղ կնշվեն բոլոր քննարկված հարցերը և այդ հարցերի վերաբերյալ ՊԵԿ դիրքորոշումը: Միաժամանակ, Ա. Մանուկյանը նշեց, որ օրենսգրքի 16-րդ հոդվածում համապատասխան փոփոխությունները պետք է արվեն այնպես, որ հարկման բազաների որոշման առումով բոլոր հարկատեսակների մասով կիրառվեն նույն մոտեցումները, քանի որ հակառակ դեպքում՝ և հարկային, և հաշվապահական հաշվառման առումով կառաջանան խնդիրներ:

5. Ներկայացվեց ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի կողմից ներկայացված՝ շրջանառության հարկի համակարգի շրջանակներում իրականացվող հանրային սննդի ոլորտի գործունեության հարկման կարգավորումներին առնչվող հարցը: Մասնավորապես՝ առաջարկվեց շրջանառության հարկի հանրային սննդին վերաբերող հարկման դրույքաչափերը պահպանել ևս 1 տարի և թույլ տալ տնտեսավարողներին ադապտանալ սխեմայի կիրառմանը: Միաժամանակ, առաջարկվեց ուժը կորցրած ճանաչել հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից իրականացվող այլ գործունեությունից ստացվող եկամուտների մասով 20% դրույքաչափով շրջանառության հարկ հաշվարկելու դրույթը և սահմանել, որ եթե տնտեսավարողը չի գերազանցել շրջանառության հարկի շեմը, ապա վերջինիս այլ գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկը հաշվարկվի շրջանառության հարկի համապատասխան դրույքաչափով: Նշված հարցի մասով Փ. Թադևոսյանն առաջարկեց հնարավորություն տալ շրջանառության հարկ վճարողներին հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից տարբերվող գործունեության տեսակների մասով համարվել ԱԱՀ-վճարող: Միաժամանակ առա-

ջարկեց վերացնել հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով կիրառվող պատասխանատվության տարբերակված մոտեցումը: ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների համար նրանց այլ գործունեությունից ստացվող եկամուտները 20% դրույքաչափով հարկելը եղել է նրանց նկատմամբ մնացած սահմանափակումները չկիրառելու գինը: Միաժամանակ նշեց, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների այլ գործունեության տեսակների մասով ստացվող եկամուտները 20% դրույքաչափով չհարկելու վերաբերյալ առաջարկները պետք է քննարկել միայն շեմի, փոխկապակցվածության և մնացած սահմանափակումների կիրառման համատեքստում: Նշեց նաև, որ Փ. Թադևոսյանի առաջարկած տարբերակին համապատասխան՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով շրջանառության հարկ վճարող, իսկ այլ գործունեության մասով՝ ԱԱՀ վճարող համարվելու համար 2 առանձին հայտարարություններ ներկայացնելը, գործունեության տեսակների մասով առանձնացված հաշվառում վարելը, շրջանառության հարկի շեմի հաշվարկմանը մասնակցող գործարքների և գործառնությունների տարանջատումը պրակտիկայում էական դժվարություններ կստեղծի: Փ. Թադևոսյանը նշեց, որ այդ խնդիրները միշտ էլ առկա են եղել նույն հարկ վճարողի կողմից տարբեր հարկման համակարգերում գործունեություն իրականացնելու դեպքերում: Ա. Մանուկյանը նշեց, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների այլ գործունեությունից ստացվող եկամուտները 20% դրույքաչափով հարկելը նպատակ է ունեցել կանխելու այն ռիսկերը, որ խոշոր տնտեսավարող սուբյեկտները չսկսեն փոքր չափերով հանրային սննդի ոլորտում իրականացնել գործունեություն, գալ շրջանառության հարկի դաշտ և առանց շեմի կիրառության, առանց որևէ սահմանափակումների իրենց հիմնական գործունեությունն իրականացնեն արտոնյալ պայմաններում: Միաժամանակ նշեց, որ ծանոթ են բոլոր առկա խնդիրներին և ներկայումս էլ քննարկվում է ընտանեկան ձեռնարկատիրության համակարգում և որպես ինքնազբաղված անձ գործունեությամբ

յուն ծավալելու համար որոշակի շեմ սահմանելու, շրջանառության հարկի համար շեմ սահմանելու կամ համապատասխան դրույքաչափերի սահմանման դեպքում շեմ չկիրառելու և այդ համատեքստում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողների հարկման կարգավորումները:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՓԱՅԼԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ